EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA

26 մարտի, 2012թ.

Մամլո հաղորդագրություն
Press release
Սփյուռքի հայկական կրթօջախների համար
էլեկտրոնային գրադարանի մասին

Կանադայում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը՝ իրականացնելով Սփյուռքի հայկական կրթօջախների համար ուսումնական նյութերի տրամադրման ծրագիրը, երկու տարի առաջ ստեղծել է www.spyurq.dasagirq.am կայքէջը՝ ուսումնական նյութերի էլեկտրոնային գրադարանով: Կայքէջում տեղադրվում են կիրառության մեջ գտնվող և նորաստեղծ դասագրքերի, ուսումնական ծրագրերի, մեթոդական ձեռնարկների ու ուսումնաօժանդակ նյութերի էլեկտրոնային տարբերակները՝ օգտվողների համար անվճար ներբեռնման հնարավորությամբ:

Գործող կայքի գաղափարը չի բացառում նաև անհրաժեշտության դեպքում, նյութերի առանձին հատվածների տեղադրում՝ ծանոթացման նպատակով կամ առանձին նյութերի ներբեռնում՝ վճարովի հիմունքներով:

ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը պատրաստակամություն է հայտնում համագործակցել արտասահմանյան երկրներում հայերեն լեզվով ուսումնական նյութերի (դասագրքերի) հրատարակչական աշխատանք իրականացնող կազմակերպությունների հետ՝ նրանց կողմից հրատարակվող ուսումնական ձեռնարկների էլեկտրոնային տարբերակները վերոնշյալ կայքէջում տեղադրելու հարցում:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613.234.3710 Fax: 613.234.3444